№ 2 ԹԷՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐ 14

1896

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐ 14 № 2

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան. կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահմանի տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզւով իւրաքանչիւր բառին 1 մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՍՈՅՆ 1896 ԹՒԱԿԱՆԻՆ

24-ՐԴ ՏԱՐԻ „Մ Շ Ա Կ“ 24-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ր. է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 րուբլի։ Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար, Եւրոպայի բաժանորդները տարեկան 30 ֆրանկ,

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, և թէ օտար լեզուներով, բառին վճարվում է 2 կոպէկ։

1—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ հայկական հարցի մասին. Նամակ Հայաստանից. Երկու խօսք. Նամակ Թաւրիզից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաքուից. Խառն լուրեր Վաճառականական տեղեկատու. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. Յայտարարութիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Յափշտակութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Այս բոլորից ամէնքը քիչ թէ շատ զբաղուած են Զէյթունի ապստամբութիւնով։ Սակայն այդ կողմերումն է միայն ուր շարունակվում են անկարգութիւնները. կարելի է ասել որ այդ քաղաքը և իր շրջակայքը ծառայում է որպէս գլխաւոր կենդրոն հայ ապստամբների։ Եթէ ճնշուի և ոչնչացուի այդ տեղերը, գրեթէ վերջացած կը լինի հայկական հարցը։

Моск. Вѣд.

(Հակահայկական թերթ)

Լրագիրների մէջ հրատարակուած են Ռօզբէրիի (Սօլսբիւրիի նախորդի) հետեւեալ նամակը. «Չը նայելով Սօլսբիւրիի վճռական խօսքերին, անգլիայի բողոքը հայկական հարցի մասին, մնաց անհետեւանք. Նրա միջամտութիւնը և սպառնալիքները թողնեցան անուշադիր։ Նրա քաղաքականութիւնը, ըստ երեւոյթին, ուժասպառ է եղել. մինչ հայկական սարսափները շարունակվում են, Կառավարութիւնը, ըստ երեւոյթին, բաղխուել է դժուարութիւնների։

Ինչպէս երեւում է նա շւարել է. կամ պիտի հայերին թողնել և կամ եւրոպական պատերազմ աչքի առջև ունենալ։ Ես պարտաւոր եմ լսելու արդարացումներ՝ կառավարութեան կողմից և այն ժամանակ իմ դատավճիռս կը յայտնեմ ու կը սպասեմ պարլամենտի բացմանը»։

Րէյտէր.

Ֆրանսական, անգլեական և ռուսական դեսպանութիւնների առաջին թարգմանները Բ. Դռան բողոքեցին Հայաստանում րէֆօրմներ մտցնելու կոնտրօլ ունեցող յանձնաժողովի գործողութիւնների դէմ։

—Անգլիական դեսպանութիւնը Բ. Դրան ուղարկեց մի վճռական բողոք ընդդէմ Մուշի Կադիի ընթացքների, մեղադրելով նրան այն բանի մէջ որ նա գրգռում է թիւրքերին՝ հայերի դէմ։ Դեսպանութիւնը պահանջում է անմիջապէս հրաժարեցնել այդ Կադիին։

Րէյտէր.

Աւստրիական լրագիրները հաղորդում են որ մեծ պետութիւնների դեսպանները հաւաքապէս առաջարկեցին Բ. Դրան՝ զինուորական դատաստաններ հաստատել Թիւրքաց—Հայաստանում կատարուած սպանութիւնների հեղինակներին դատելու համար։ Դեսպանները առաջարկեցին նոյնպէս փոխառութիւն անել՝ վնասուածներին վարձադրելու համար։

Temps.

Սվազի յոյները 25000 ֆրանկ են պահանջում իբր վարձադրութիւն այն վնասների և կորուստների, որ նրանք ունեցան խառնակութիւնների և սպանութիւնների ժամանակ։

Times.

Խօլերա է երեւացել Դամասկոսում ուր օրական 200 հոգի են մեռնում։

Temps.

Հայոց պատրիարքը յայտնել է որ Սղերդի 30000 բնակիչներից մնացել են այժմ 2000 միայն. բոլոր եկեղեցիները մզկիթների են փոխել։

—Միացեալ Նահանգների դեսպանը պ. Տէրրէլլ, վերջացնելով իր հարցուփորձը հայերի կոտորածների մասին, վերադարձել է Կ. Պօլիս՝ Զմիւռնիայից։

—Ձերբակալուել է յայտնի հնչակեան Յակոբ Արզեան։ Այդ ձերբակալութիւնը մեծ յուզում է առաջացրել հայերի մէջ։ Արզեանը մի երիտասարդ է և աւարտել է Նանսիի անտառաբանական դպրոցում։

Temps.

Շաքիր փաշան, Հայաստանի կոմմիսար նշանակուած բարձր պաշտօնեան, խնդրել է թողնել իր պաշտօնը որովհետև նրա ռոճիկը չէ վճարվում։ Նրա տեղ հարց կայ նշանակել Ղազի Մուխթար փաշան։

Temps.

ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

(Քաղուած մի մասնաւոր նամակից)

Աստուած 95-րդ տարու արկածներն տանի և ալ չբերէ։ Ահա այն սրտաճմլիկ լուրերն որ ստացայ երկուշաբթի օր։ Հոկտ. ամսոյն վերջին օրերն քիւրդերն մի սաստիկ յարձակումն կը գործեն Իշմէի վրայ։ (Խարբերդի մօտի մի գիւղ) Մերայինք դրացի թրքաց տունն կապատանեն անձնական պաշտպանութեան. համար. իսկ հայրս կը մնայ տունն, որ տան ապրան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ

(հոգեբանական պատմուածք *)

II

Միայն վեց հատ նրանցից և նա հասած կը լինէր նպատակին. ոչ բնութիւնները կը յիշատակէին և ոչ էլ Մարիին կը կորցնէր։ Իսկ այդ Խողովաճառը միթէ իսկապէս պիտի այդքան փողը երեք ամսուայ մէջ ունէր, շըռայլէր։

Որքան լաւ կը լինէր եթէ դրանցից նա վեց հատը իրեն փոխ տար։ Պատրաստ էր մուրհակ տալու, նոյն իսկ մի մեծ տոկոս և հոկտեմբերին կը վերադարձնէր։ Ո՛չ, աւելի, աւելի շուտ. երկիր հասնելուն պէս նա իրեն ուղարկելիք փողը կուղարկէր Խողովաճառին։... Ինչ անմիտ բանել էր մտածում։ Ո՛վ նրան փոխ կը տար. ինչի վրայ վստահացած. մանաւանդ այդ Խողովաճառը, որին առաջին անգամը և, գուցէ վերջին անգամն էր տեսնում։

Ծանօթներից էլ ոչ ոք չը կար որ փող ունենար. ամենքը իր պէս, եթէ ոչ աղքատ, գոնէ առանց պատրաստ փողի։

Ելիպտացիները փողը փոխեցին և նստեցին գնացքում։ Ուսանողը սուրն մտաւ և կարծես յոգնած, ընկաւ անկողի վրայ։

Սաստիկ շոգ էր. մի թմրութիւն եկաւ վրան, բայց քունը չէր տանում։ Գլուխը գործում էր։

Որպիսի արագ, որպիսի վառ գործունէութիւն։

Միտքը միշտ Խողովաճառի կողմն էր. Նրան տանջում էր այն միտքը որ այդ գեր, անպէտք ֆրանսիացին 2000 ֆրանկ ունէր իր ծոցում երեք ամսուայ—ով գիտէ ինչ տեսակ --խայտառակ քէֆերի համար, մինչ այդ փողից 300-ը իրեն կարող էր ազատել, կեանք տալ, ապագան կանոնաւորել, փրկել իրեն և երջանկացնել։

Պէտք չէր արդեօք յափշտակել։

Յափշտակել... ինչպէս...

Շատ պարզ բան էր։

Խողովաճառի ետևից դուրս կը գնար, կը մօտենար և կը բարեկամանար հետը։ Բայց ինչպէս։—Օ՛, այդ հեշտ էր. ֆրանսացու հետ բարեկամանալուց դիւրին բան չը կայ. մի տեղ հանդիպեցիր, մի երկու խօսք խօսեցիր հետը օդի մասին կամ մագաղիններին դրսից երեցող ապրանքների մասին և ահա բարեկամ ես։ Այդպէս նա կը մօտենար, կը խօսեցնէր, յետոյ կը հրաւիրէր մի բան խմելու։ Կառաջարկէր նրան մի պտոյտ զբօսնելու փողոցներում, կը խօսեցնէր.—խաղերի մասին կը խօսէր, խաղութեան մասին՝ և նրան այդպէս կը տանէր մինչև անտառակը, Bois de la Batie։ Քաշ կը տար խուլ ծա-

*) Շարունակութիւն Շաւիղ № 48, 95 թ.

քը տալովերթայ անոնց գրգռեալ բարկութիւնն իջեցնէ Սակայն ամբարիշտք ապանց նորա տարիքն նկատելու, առանց նորա յօժարակամ զիրենք զոհացնելու ջանքը ի հաշիւ առնելու, կսպաննեն զայն ճիշտ մեր դրսի դրան առջևն, ուր կմնայ երեք օր անթաղ։ Տունը բոլորովին կը կողոպտեն, այնպէս որ մի ասեղ անգամ չեն թողուր. նոր շինուած մասն ալ կայրեն։ Աքաստանեալք 4 օր թրքաց կողմէն կը հիւրասիրուեն. և ապահովութիւն է ըսելով տուն կը վերադառնան. յետոյ, թրքաց թելադրութեամբ մահուան արժանի եղողներուն մի ցուցակ կը պատրաստեն և զրկելով Խաւրէի շէյխը կը կանչեն։ Ցուցակագրեալք կը լեցնին եկեղեցին. և իրենք աղբիւրին մէյտանը կը նստին ու մէկիկ մէկիկ դուրս կը բերեն եկեղեցիէն, կառաջարկեն որ իսլամ լինեն, և չլինողներն սոսկալի անգթութեամբ կսպաննեն։ 70 հոգի սպանուած են և 30 հոգի ալ վիրաւոր։ Ալ Իշմէի մէջ հայ չկայ։ Նկարագրութիւնն այս աղէկտուր ոճով կը վերջանայ. մնացեալ մասն Հաջդուկի հովանոցն տակն են, որը խեղդի նման կը վազվզէ այս ու այն կողմն, որպէսզի մի քիչ գթութիւն և ողորմութիւն գտնէ. վասնզի չունին հայ ուտելու, չունին հանդերձ հագնելու, չունին անիծդին մէջը պառկելու։ Սմենասատիկ հերսով վարուած են Իշմէի հետ։ Բայց միայն Եղեգի և Վարդատել գիւղերն ապահով մնացեր են. մնացեալ բոլոր գիւղերն արշաւանաց առարկայ եղած են։ Կողոպտեր են առ հասարակ թէ գիւղերուն և թէ քաղքին մէջ։ Նատ ռներ այրուած, շատ մարդիկ սպաննուած. մնացեալը գրեթէ ամենքը թրքացած։ Հիւսէյնիկի մէջ 1200 թրքացած են, որոց մէջ են պապ. Աստուր և բրօֆ. Նալիկեան. Քիսրիկ 350 հոգի թրքացած։ Քողաքին մէջ շատ կոտորած չէ եղեր, սակայն կողոպուտն անհաշիւ։ Սէրայ—կէտիկի բոլոր աչքի զարնուած տներն կրակի տրուած են։ Միսիօնարաց 12 շէնքերէն 8-ը նախ կողոպտուած և այսօր թշուառ դրութեան մէջ է։ Մեռած են շատ ուսուցիչներ...

* * *

ՆԵՐԿՈՒ ԽՕՍՔ

—

Մշակից իմանում ենք, որ Երևանի թեմի եկեղեցական ծխ. ուսումնարանների տեսուչ նշանակուած է երիտասարդ Մեսրոպը վ. Տէր-Մովսէսեան։ Վերջապէս այդ դպրոցները երկար ժամանակ անտէր-անտիրական մնալուց յետոյ, անցնում են մի եւրոպական ուսում ստացած մարդու ձեռք. դա մի յաղթութիւն է, որ տարաւ Երևանի թեմի երիտասարդութիւնը Էջմիածնի վրայ։ Թէ ինչպէս կը տանի Մեսրոբ վարդապետն այդ ծանր պաշտօնը, ցոյց կը տայ մօտիկ ապագան. առ այժմ այսքանը կասենք, որ հայը Մեսրոբը ձեռք է առել այնպիսի դպրոցների գործեր, որոնք շընորհիւ այս կամ այն տգէտ հոգևորականի, կամ սրա նրա կամայականութեան, տասնեակ տարիներով յետ են մնացել յառաջադիմութեան գծից։ Այդ շատ լաւ հասկանում էր ժողովուրդը, ուսուցչական մարմինը, երիտասարդութիւնը. նա պահանջում էր, բայց Էջմիածինը դեռ յամառում էր կուրծելով, թէ եթէ բաւականութիւն տայ այդ արդար պահանջներին, իր վարչական բարձրութեանը վնասած կը լինի. բայց այժմ նա ընկճում է, տեղի է տալիս. վերջին ամիսների փաստերն այդ են ապացուցանում։

Հաւատալ Երևանի թեմի դպրոցներն այնպիսի մարդկանց, որպիսիք էին Գեօնճեան, Կիւրեղ Նեպիսկոպոս և Բենիկ, նշանակում է ծաղրել և արհամարհել դպրոցական գործը, վնասել և թունաւորել տասնեակ հազարաւոր անմեղների կրթութիւնը, որ ներկայում փոփոխուկ պայմաններում է գտնվում։ Ի՞նչ կարող է անել պիցուք մի Բենիկ, որը նոր թոսած դպրոցականն է եղանը, որի վրայ նա այնքան զգուելի է եղել, կատաղութեան փրփուրը բերնին, լբեն նպատակ է դնում վրէժ առնելոյս կամ այն ուսուցչից, այս կամ այն քահանայից. մի մարդ, որ դպրոցական գործի նոյն իսկ այբուբենը չը գիտէ. որը մի քանի տեղ խոստովանուել էր իր անձնանհասութիւնը տեսչական գործում, թէպէտ առանց կարմրելու շարունակում էր այդ պաշտօնը վարել։ Մինթէ այդ յայտնի չէր նրա պաշտպաններին. շատ լաւ յայտնի էր, բայց որոշ նպատակով պաշտպանում էին և պաշտպանեցին դեռ այն դէպքից յետոյ, երբ ամբողջ Ալէքսանդրապոլը խրլուեց նրանից, իր անընդունակութեան պատճառաւ։ Կարող էք երևակայել, ընթերցող. Ես կը մերժուէր, կը մերժուէր անշուշտ. մի բան վկայում էր որ նոյն իսկ խստութեամբ կը մերժուէր։

Յն ժամանակ ինչ պէտք էր անել։ Երդեօք յարձակուել վրան։ Ո՛չ, նախ կը հանէր ծոցի անարակը, կը պատռէր նրանից մի թերթ և կը գրէր մի յայտարարութիւն։ Կը գրէր այսպէս... «Յայտարարում եմ, որ, ես ստորագրող, խնդրեցի...» իսկ անունը, որի՞ անունով գրէր։

Պէտք էր անունը հարցնել։ Նա—ինչ զարմանալի բան կայ այդտեղ—կը դառնար Խոզավաճառին և կը հարցնէր անունը։ Նա, անունը էր Զարբովարի—Զարլ Բովարի.. բայց ինչու ուրեմն այդ Զարբովարի ծիծաղելի անունը, որտեղից միտն եկաւ այդ։ Ա՛խ, այդ, առաւօտեան Ֆլօրէրի դէմքն զարձոցն էր թերթել և նրա հերոսի անունն էր այդ (*...

Ուրեմն կը գրէր։ «Զարբովարի խոզավաճառից»... Գուցէ խոզավաճառ չէր, գուցէ մի բարի գիւղացի էր, որ իր քրտինքովն էր շահել այդ փողը... Ա՜հ, իր քրտինքովը. մի բարի գիւղացի... Ո՛չ երբէք. ոչ մի մարդ իր արդար քրտինքովը չէ կարող 2000 ֆ. շահել այնպէս, որ նրան 3 ամսվայ «վայելչութեան» համար միայն շռայլի.... Կը գրէր ուրեմն. «Զարբովարի Խոզարածից»... այսինքն Խոզավաճառից. խոզի պէս անասունից, դիմակաւոր և օրինաւոր գողից»... Այս ինչ է, ինչու է այդպէս բորբոքվում, հայհոյել սկսում։ Լաւ չէ այդ. ոչ, աւելի լաւ էր գրել որ «գտնէ փոխ տայ ինձ 300 ֆրանկ իր շռայլելու յատկացրած այն փողերից, որ նա հաւաքել է թշուառներին հարստահարելով»...

Եւ այսպէս նա վերջացնելուց յետոյ թուղթը, կը տար Խոզարածին և կասէր ծանրութեամբ։—«Պարոն, դուք մերժեցիք ինձ. ահա մի յայտարարութիւն. ահա և մի դանակ, որ կարող է ձեր մեծ ու կլանող փորը պատռել, եթէ ձեր ծոցի եղած փողից 300 ֆրանկ չը տաք ինձ»...

*) Ֆլօրէրի «Մադամ Բովարի» վէպը։

խոստովանեցին, որ նա անընդունակ է, խլեցին նրանից մի քանի դպրոցներ, բայց մօտ 80 դպրոց էլի շարունակեցին թողնել նրա ձեռքում. միթէ դառն ծիծաղի արժանի չէ այս վարմունքը։

Հարցնում ենք. ինչ կարող էր անել Կիւրեղ Եպիսկոպոսը, այդ Մելա-Նաբարգինը, որը շարունակ կրկնում էր, «Ցոյցոց Սաղմոս, ծամագիրք տալու է», որ «աղջկերքը հէչ ալ չը կարդան դանա՛ աղէկ», «Ասուած մէկ է երգեցողութիւնն ալ մէկ պիտի ըլլայ» և այլն։ Սրանց գործն այն եղաւ, որ փորձուած և բարեխիղճ ուսուցիչների մեծ մասը սրան նրան սկսեցին դիմել, թողնելով իրենց սիրելի դպրոցները։ Տասնեակ դպրոցներ Սուրմալուի, Էջմիածնի, Արարատի, Նախիջևանի, Նոր Բայազէտի, Ալէքսանդրապոլի գաւառներում փակելու ստիպեցան. մնացածների նիւթական դրութիւնը խղճալի դարձաւ. դպրոցական փողերը զանազան գործակալների ու քահանաների գրպանները տուզացրին. ժողովրդական ընտրողական սկզբունքը սրա նրա կամայականութեան տեղի տուաւ։ Ծախսերի ցուցակները իսպառ վերացան իրենց թողնելով, ի հարկէ, և հաշուետուութիւնը. ուսուցիչները շատ տեղ պահանջել սկսեցին իրենց ռոճիկները. շատ տեղ ժողովուրդը զրկեց և պաղեց դպրոցներից և այլն։ Անարատ մնացին միայն այն դպրոցները, որոնց հոգաբարձական մարմինները արհամարհելով այս կամ այն սնարգեստի կապրիզները, տարան իրենց գործերը, առաջնորդուելով մեր դպրոցական կանոններով, որոնք թէպէտ այնքան էլ լաւ չեն, բայց չեղածից բարձր են։ Այդպէս վարուեցին Կարսի, Կաղզուանի, Իգդիրի, Դաշ-Բուռնուի, Ղամարլուի, Դէշլուի, Ալէքսանդրապոլի, Աշտարակի, Նոր-Բայազէտի Նորքի, Նախիջևանի և շատ տեղերի հոգաբարձուները։ Ահա թէ որպիսի դպրոցներ կառավարելու է հրաւիրվում Մ. վ. Տ. Մ. մենք նրանից, ի հարկէ հրաշքներ չենք պահանջում, բայց ասում ենք, որ լուրջ ուշադրութիւնը հին վերքերը կը բժշկէ։ Յդ պահանջում և սպասում ենք։

Ընտաւորդ

Դավրէժ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

28 դեկտ. 95.

Նախորդ նամակաւս գրած էիչ որ ամսոյս 16-ին պ. Աղայեանցը, յօգուտ Ղալայի կանանց բարեգործական ընկերութեան մի ներկայացում էր տալու. արդէն տեց։

Այդ գիշեր ես էլ ներկայ էի ներկայացման. կարելի է ասել շատ լաւ անցաւ։ Այս անգամ հասարակութիւնից բաւական անձնաւորութիւններ աչքի էին ընկնում, երիտասարդութիւնից մի քանի հոգիներ այս անգամ նեղկայացման օգնում էին. դա մի մեծ հրաշք էր, որովհետև մինչև այժմ սառն կերպով էին վերաբերվում դէպի նեղկայացումները։

Պ. Աղայեանցը արդէն իւր դերում կատարեալ էր ինչ որ կարելի էր պահանջել մի դերասանից. միւս դերասաններն էլ գովելի էին իրենց դերերում։

Զուտ արդիւնքը կարելի է 100 թուման չափ լինի։ Անտրակտների միջոցին նուագում էր զինուորական երաժշտական խումբը։

*** 22-ին ընթերցասիրաց ընկերութեան սենեակում ընդհանուր ժողով կար. ներկայ էին 8—9 հոգիներ, և ինչ որ ես գուշակել էի, այդ ժողովում բոլորը կատարուեցաւ. ժողովը որոշեց ընթերցարանը մի առ ժամանակ փակել և նոյն օրուանից փակուեց։ Նոր գործադիր ժողովի անդամներ ընտրուեցան, հին նախագահը տապալուեցաւ և նոր նախագահ ընտրուեց։ Յոյս ունինք որ ընկերութեան ներկայ գործադիր ժողովի անդամները, խրատուած կլինեն և կը ջանան իրենց նախորդների սխալներ ուղղելու կանոնաւոր գործել։

*** Թէյմուրխանի որդին շղթայակապ բերուած է ստ պատժելու, որովհետև տաճկաց ոահմանագլուխը խառնում էր. սրեմն թող տաճկաց տերութիւնն էլ օրինակ առնի մեր ողորմած և արդարադատ տերութիւնից, ինքն էլ պատժի այն քրդերին, որոնք խառնում են Վեհափառ Շահի սահմանագլուխը։

*** Նոր տարի օրը Ղալայի կանանց բարեգործական ընկերութիւնը տօնածառ է տալու. Լիլավայի կանանց ընկերութիւն էլ ամէն տարի տալիս էր, այս տարի էլ կտայ շատ հաւանական է.

ռուղինների մէջ։ Նրբ մի անգամ հասնէին մի նատարանի, նա կը հանէր դանակը...

Բայց ո՛չ, այդ լաւ չէր։ Ա՜հա թէ ինչ կանէր։ Կը նստէր նրա կողքին և կասէր։

—«Պարոն, եկել էք այստեղ զուարճանալու. լաւ ուրեմն, կան մարդիկ որոնք մի ֆրանկի համար տանջվում են... զրկնակ. ես մի ուսանող եմ. ահա այսպէս և այսպէս է իմ գրութիւնս, եթէ այն քանի օրերում չը գնամ, ամբողջ ապագա, կեանքս փչացած կը լինի»...

Նա ճարտարախօս կը լինէր։ Կաշխատէր յուզել նրան. կը նկարագրէր իր կեանքը, իր յոյսերը մէջ տեղ կը բերէր, ցոյց կը տար թէ մարդկութեան և իր ազգի հաւար ինչքը է մտածում անելու։ Եւ յետոյ կասէր։

«Ը դ. են Կրէդի Լիոնէ բանկումն էլ, որ դուք 2000 ֆրանկ փոխեցիք. այդ փողը դուք պիտի վատնէք 3 ամսոյ ընթացքում։ Եկէք դրանից 300 ֆրանկը ինձ տուէք». դուք դրանով մի մեծ, մի շատ մեծ ուրախութիւն արած կը լինէք ինձ»....

Նա կը մերժուէր, կը մերժուէր անշուշտ. մի բան վկայում էր որ նոյն իսկ խստութեամբ կը մերժուէր։

Յն ժամանակ ինչ պէտք էր անել։ Երդեօք յարձակուել վրան։ Ո՛չ, նախ կը հանէր ծոցի անարակը, կը պատռէր նրանից մի թերթ և կը գրէր մի յայտարարութիւն։ Կը գրէր այսպէս... «Յայտարարում եմ, որ, ես ստորագրող, խնդրեցի...» իսկ անունը, որի՞ անունով գրէր։

Պէտք էր անունը հարցնել։ Նա—ինչ զարմանալի բան կայ այդտեղ—կը դառնար Խոզավաճառին և կը հարցնէր անունը։ Նա, անունը էր Զարբովարի—Զարլ Բովարի.. բայց ինչու ուրեմն այդ Զարբովարի ծիծաղելի անունը, որտեղից միտն եկաւ այդ։ Ա՛խ, այդ, առաւօտեան Ֆլօրէրի դէմքն զարձոցն էր թերթել և նրա հերոսի անունն էր այդ (*...

Ուրեմն կը գրէր։ «Զարբովարի խոզավաճառից»... Գուցէ խոզավաճառ չէր, գուցէ մի բարի գիւղացի էր, որ իր քրտինքովն էր շահել այդ փողը... Ա՜հ, իր քրտինքովը. մի բարի գիւղացի... Ո՛չ երբէք. ոչ մի մարդ իր արդար քրտինքովը չէ կարող 2000 ֆ. շահել այնպէս, որ նրան 3 ամսվայ «վայելչութեան» համար միայն շռայլի.... Կը գրէր ուրեմն. «Զարբովարի Խոզարածից»... այսինքն Խոզավաճառից. խոզի պէս անասունից, դիմակաւոր և օրինաւոր գողից»... Այս ինչ է, ինչու է այդպէս բորբոքվում, հայհոյել սկսում։ Լաւ չէ այդ. ոչ, աւելի լաւ էր գրել որ «գտնէ փոխ տայ ինձ 300 ֆրանկ իր շռայլելու յատկացրած այն փողերից, որ նա հաւաքել է թշուառներին հարստահարելով»...

Եւ այսպէս նա վերջացնելուց յետոյ թուղթը, կը տար Խոզարածին և կասէր ծանրութեամբ։—«Պարոն, դուք մերժեցիք ինձ. ահա մի յայտարարութիւն. ահա և մի դանակ, որ կարող է ձեր մեծ ու կլանող փորը պատռել, եթէ ձեր ծոցի եղած փողից 300 ֆրանկ չը տաք ինձ»...

Խոզարածը կը շարէր։ Իսկ եթէ դէնք ունենար մօտը—մի բէլօլէր կամ դանակ. չէ որ կարող էր իրեն սպանել։ Է՜հ, ինչ ՝կայ, աւելի լաւ չէր լինել մեռնել, քան տանջուել այդպէս... Չէր կարծում որ դէնք ունենար Խոզավաճառը. Զվէյցարիայում դէնք կրելը արգելուած է։

Ուրեմն, նա կը շարէր, կը վախենար, կը հանէր փողը և կը տար։

Հա և 300 ֆրանկ վերջապէս։

Այժմ ինչ անել։ Եթէ հեռանար, Խոզարածը կարող էր նրա ետևից հասնել, գոռալ որ բռնէին իրեն... և կը բռնէին. չէ որ Խոզարածները իրը նեցուկ՝ շատ ոյժեր ունին...

Ո՛չ, 300 ֆրանկը ունենալուց յետոյ, պէտք էր հասնել նպատակին, դեռ ես բռնուել պէտք չէր. այդ յետոյ. վերադառնալուց յետոյ ինչքան կուզէին թող բռնէին իրեն։

Զը պէտք էր դեռ բռնուել...

Կանգ առաւ մտածելուց։ Կոկորդը այրվում էր. օ, որքա՜ն շոգ էր...

Իջաւ անկողնի վրայից և երկու գաւաթ ջուր խմեց միմեանց վրայ։ Յետոյ մի ակնարկ ձգեց շուրջը և նորից պառկեց։

(Կը շարունակի)

⁂ Տեղում մս կարմրուկ ասած հիւանդութիւնը շատ տարածուած է, տուն չկայ որ երեխայքը այդ հիւանդութիւնից բռնուած չ'լինեն։

⁂ Ամսիս 23-ին դարձեալ մի ներկայացում կար, յօգուտ մի բարեգործական նպատակի. ներկայ չէի, բայց ինչպէս պատմում են լաւ է անցկացել։ Միայն ասում են որ ներկայացման ժամանակ կար մի աչքհեստական (այսինքն առաջուց պատրաստուած) ծափահարութիւն։

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացել ենք Թեհրանի Հայկազ. դըպրոցի ներքին կեանքի մասին մի յօդուած, որը կը տպագրենք եկող անգամ, չը նայելով որ մենք խօսք էինք տուել մի քիչ էլ համբերել. բայց համբերութեանն էլ չափ ունի։ Այն խայտառակ մանկավարժութիւնը որին ենթակայ է դըպրոցը շնորհիւ Կովկասից բերուած մի անկարգ ու լիովին տգէտ ուսուցչի և այն աններելի համբերատարութիւնը, որով զինուած լռել է Թուլամորթ հոգաբարձութիւնը, ընդունա՛կ են այն աստիճան բթամտացնել ու փչացնել մանուկներին, որ եկող տարի եթէ դպրոցը ունենայ լաւ ուսուցիչներ, պիտի ունենայ սակայն անընդունակ և բթացած մանուկներ։ Հինգ ամսուայ անհոգութիւնից ծագած վնասը 5 տարուայ մէջ չի չոկուել։ Մենք մերկ փաստեր կը տանք, խռովեցուցիչ, զայրացնող փաստեր, որոնց առջև հոգաբարձութիւնը դեռ խուլ է ձևանում։

—

Մեզ հաղորդում են որ մի խումբ շիրաջիներ և նրանց նմաններ ստորագրութիւն են ժողովում որ դիմեն Էջմիածին և պահանջեն Թեհրանի փոխանորդ հօր հեռացումը։ Այդ շիրաջիների գլուխն են անցել Թեհրանի խաւարամիտ կուսակցութեան մէջ գտնւող և խարանուած ու խայտառակուած սրաբածներ։ Հեռացնելու համար մի այնպիսի պատրւակ են գտել, որը ոչ մի հիմք չունի, որովհետև փոխ. հայրը լաւ գիտէ գոնէ եկեղեցական ծէսերը։

—

—Կովկասից մեզ հաղորդում են հետևեալը։ «Ռուսաց լուսաւորութեան նախարարութեան հրամանով, 1896 թ. յունվար 1-ից սկսած իր իրաւասութեան պիտի ենթարկուեն Կովկասի այն բոլոր հայոց դպրոցները, որոնք եկեղեցական—ծխական չեն և պահպանվում են զանազան անձերի կամ բարեգործական հիմնարկութիւնների ձեռքով և նպաստներով։ Այդպիսի դպրոցների թիւը կարծեմ այժմ հասնում է մօտ 150-ի։ Ազատ են մնում միայն այն դպրոցները, որոնք եկեղեցիներին կից են և պահպանվում են եկեղեցու միջոցներով։ Դեկտ. 16-ին, օրինակ, պահանջ է ուղարկուել Բագուի մարդասիրական ընկերութեան դպրոցը փակելու»։

—

Անցեալ օրերը գիշերով կողոպտել են Եղբ. Թումանեանցների գրասենեակը, մուրհակներ ոչնչացրել, ոսկեղէն զարդեր տարել և 3--4000 թումանի չափ փախցրել. խիստ քննութիւն է կատարվում. բռնուել են երկու պոլսեցիներ։

—

Դավրէժից մեզ գրում են որ դեկտ. 31-ին Լիլավայում տեղի է ունեցել Հայուհեաց ընկերութեան պատրաստած մի շքեղ տօնածառի հանդէս և գրական երեկոյթ՝ օգնութեամբ նոյն թաղի ուսուցչական խմբի։ Սրահը լիքն է եղել և երեկոյթը շատ լաւ անցել։ Եղել են ժողովրդական պարերգներ և երկու մանկական պիեսներ։ Գովելի է Հայուհեաց ընկերութեան նախագահ Տիկ. Իսկուհի Յակովբեանի գործունէութիւնը ու ջանքերը, որ չը նայելով իր մանուկի հիւանդութեան, եկել աշխատում էր հասարակութեան օգտի համար։

—

Շաւիղ № 45-ում Սրտաբիլից եկած մի թղթակցութեան մասին ահա մեզ ինչ են գրում։ «Այդ թղթակցութեան մէջ ասուած է որ ուսուցիչը ռոճիկ չէ ստանում և այլն». դա զրպարտութիւն է, որովհետև ուսուցիչը 2 տարուայ ռոճիկը միանգամով է առել և տուն գնել նրանով. ժողովուրդը հոգաբարձութեան վրայ զայրացել է թէ ինչու պիտի միանգամով այդքան փող տրուի ուսուցչին և վերջինս էլ երևի որ կամենալով ազատուել դրանից, դրդել է գրելու այդպիսի զրպարտութիւններ»։ Մեր թըղթակից Խուրշիդին հրաւիրում ենք պարզել այդ խնդիրը, եթէ նա կամենում է որ չը կորսուի խմբագրութեանս իր վրայ ունեցած վստահութիւնը։

—

Ստացանք Վիէննա տպւած «Ծագումն Հայ տառից» գիրքը, գրեց Տոք. Ն, Տաղաւարեան. գինը յայտնի չէ։ Գիրքը բաղկացած է երկու մասից, որի առաջինում գրողը նկարագրում է հայերէն տառերի կազմող Մեսրոպի կենսագրութիւնը։ Երկրորդ մասում նա քննում է հայ գրերի ծագումը և գըտնում է սեմիտական—փիւնիկեան տառերից։ պ. Տաղաւարեանի աշխատութիւնը ոչ մի նոր լոյս չէ աւելացնում արդէն եղածների վրայ, բայց հետաքրքիր ժողովածու է բոլոր եղած կարծիքների. Տպագրութիւնը փառահեղ է։

—

Շաւիղի բաժանորդութեան նուէրներ եղել են։ 1) Ռաշտից՝ պ. Ա. Յովսէփեանից Էնզէլիի հայոց գրադարանին։ 2) Նոյնտեղից պ. Առաքել Մարգարեանից Վերին Ագուլիսի գրադարանին։ 3) Նոյնտեղից պ. Ս. Տէր Սարգսեանից, խանագառ գիւղի դպրոցին։ 4) Թեհրանից պ. Ռափայէլ Թադէոսեանից—Փարիզի հայ ուսանողների գրադարանին։ 5) Ռաշտից՝ պ. Գ. Մ. Ղարագօզեանից՝ Նուշւայ Իւղավարդ գիւղի դպրոցին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

9 դեկ. 95

Շաւիղի № 28-ի մէջ նելքին տեսութիւն անուանուած մասում կարդացինք «Ամուսնական խնդիրը Խոյում» Ե. ստորագրութեամբ. «Ով չգիտէ վաղաժամ ամուսնանալու վատ հետևանքը, ասում է պարոն Ե. ով ծանօթ չէ նրա ունեցած ֆիզիքական խորտակիչ ազդեցութեանը, այս բոլորը արդէն ստուգուած են բժշկական հաստատ փորձերով, բայց Խոյում այդ խնդիրը անտես է առնուած և կամաց կամաց հասնում է վերջին ծայր չափազանցութեան, տարեց—տարի փչանում—նւազում է ամուսնական տարիքը։ Դեռ մի քանի տարի առաջ այստեղ ամուսնական տարիքը հասնում էր տղային 20-ի, իսկ աղջկանը 15-ի, բայց հետզհետէ իջեցնելով օրէնքից դուրս կարծելով այդ բանը, մէկը իւր քէֆի համար միւսը իւր հպարտութեան, հասցրին տղայի տարիքը 18-ի և աղջկանը 12-ի 13-ի. դրանով էլ չբաւականանալով, գուցէ շատերը չհաւատան իրանց ականջին, եթէ ասենք այս տարի վերջինիս տարիքը հասցրին 9-ի 10-ի»։ Պ. Ե. շատ ցաւած սրտով գրում է և հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն է դարձնում այդ վնասակար և օրէնքի հակառակ ընթացքի վերայ։

Պարոն Ե. ցաւում է, տեսնելով այդ վնասակար ընթացքը Խոյում.—մի տեղում, որտեղ դեռ տգիտութեան խաւարը պատած է. բայց եթէ տեսնի, որ Բագուի նման լուսաւորուած քաղաքում, իրան լուսաւորուած համարող մի հայ քահանայ—Տէր Եղիշէ Գեղամեանց ազգանունով, մի—10 տարեկան աղջկան աշխարայ պսակում է մի 25 տարեկան երիտասարդի վրայ, սրան ինչ կասէ. չի զարմանալ, որ պսակող Տէր Եղիշէ քահանան հոգևոր իշխանութիւնից ոչ թէ պատժի այլ պատուի արժանացած պարծենալով քէֆեր է անում և խօսողի աչքը հանում։ Եթէ հոգևոր բարձր իշխանութեան աչքի առաջ մօտ տեղում քահանան 10 տարեկան աղջիկ է պսակում և պատժի փոխարէն իրա քաջութեան համար թեմական տեսուչ է նշանակվում, աչքից մտքից հեռու Խոյում ինչեր ասես չեն պատահիլ։

Ասենք թէ Տէր Եղիշէն ոչ Աստուածանից և ոչ իշխանութիւնից վախենալով պսակեց 10 տարեկան աղջկան, բայց տեսնենք ողորմելի աղջիկը մնա՞ց իրա մարդու մօտ. չմնաց, որ չմնաց, խեղճ աղջիկը ցաւի տակ ընկաւ, փորը ուռաւ ծակւեց, քիչ էր մնում, որ մեռնէր անտէրութիւնից. լաւ էր, որ բարեհոգի միհայ տարաւ իրա տուն, բժիշկ կանչեց, երկար ժամանակում առողջացրեց անբախտ զոհին։

Ցաւալին այս է, որ հոգևոր բարձր իշխանութիւնը ո՛չ մի պատիժ չտւաւ պսակող Եղիշէ քահանային, միայն ինչպէս լսում ենք, բաւական է համարել պսակը լուծել։

Շաւիղի նոյն համարում Արտաքին տեսութիւն անուանուած մասում Բաթումից Փ. ստորագրութեամբ Տէր Կոստանդինի մասին ասում է թէ «հրաշալի թղթախաղ գիտէ, բոլոր պոռնիկների հաշիւն ունի... Պարոն Փ. երևի ծանօթ չէ Տէր Եղիշէ Գեղամեանցին, *) Սրա նման Տէր Կոտեն միթէ կարող է թղթախաղ իմանալ. Բագուի հարսանիքներում լաւ կարտոժնիկները վախենում են Տէր Եղիշէի հետ խաղալու. Նորա անունը դուրս եկած յայտնի խաղացող է. մինը ասում է այս գիշեր հարսանիքում եօթանասուն բուբլի տարաւ, մինը ասում է 100 բուբլի տարաւ, մի ուրիշն էլ ասում է լաւ թամադութիւն արաւ, լաւ պար եկաւ բեվոլվերով իրա հետ պարող ընկերին վախեցրեց, լաւ հարբել էր, սրան նրան լաւ յիշոցներ տուաւ։

Ասում են Տէր Կոստին ձմեռ ամառ Բաթումից իրա ծխականներից չի հեռանում. բայց մեր Տէր Եղիշէն միայն ձմեռը չի հեռանում Բագուից, որովհետև լաւ հարսանիքի, քէֆի, թղթախաղի, փող հաւաքելու, ժողովուրդի մէջ խռովութեան երկպառակութեան սերմեր սերմանելու ժամանակ է, բայց ոչ մի ամառ էլ չի մնում Բաքւում, միշտ երեք չորս ամիս ամառը քէֆ անելով անց կացնում ամառանոցներում։

Անցեալ 92 թւականին, որ ամեն տեղ խօլերան անխնայ հնձում էր, Բագուի գաւառում, մի թուրքի գիւղում—Մաշտաղում, որամար անոց է Բագուի հարուստներին, վախենալով որ թէ խօլերա չգար, Տէր Եղիշէն այնտեղ ամառաբա՛նոց գնացած հարուստներին վախեցնելով թէ խօլերան եկել գեղին մօտեցել է, բաւական փող է հաւաքում, փող տուէք ինձ ասում է, ես այնպէս բժիշկ կ'բերեմ, որ խօլերան չի կարող գիւղը մտնել, ձեզ վնաս տալ, համ էլ եկէք թղթախաղով, քէֆով անց կացնենք, որ խօլերան մեզանից վախենայ։ Այն ամառը Տէր Եղիշէն բացի ուրիշ օգուտներից թղթախաղում 600 ռուբլի էլ փող է տարել. մինը հանաքով ասում է. Տէր հայր, ինչու ես քաղաքից փախել եկել այստեղ քէֆ անում, թղթախաղով սրան նրան թալանում, գնա քաղաք խօլերայի հետ կռուիր, հիւանդներին հաղորդիր, մեռածներին թաղիր, կենդանիներին սիրտ տուր. յիմար չեմոր գնամ քաղաք, որ խօլերան Տէր Վարդանի նման իմ շլնքիցս էլ բռնի բաց չի թողնի. յիմարը դուք էք, որ ձեր գրպաններից փողեր եմ հանում և քէֆ անում։

Ահա այսպիսի քահանայ ունինք մենք էլ Բաթումի, Օդեսայի և այլ քաղաքների հայ ժողովրդեան պէս։

Տեղացի.

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՑՈՒ

ԱՐԺԷՔ ԳԼԽԱՒՈՐ ԲԵՐՔԵՐԻ
(5 յունվար 96)

—

Նուշի միջուկ փութը (14 և կէս ֆունտ) արժէ . . . 13 ղռ. 50 կ.
Փիստա (պիստակ) . . . 12 » — »

*) Յօդուածագիրը սխալվում է. պ. Փ. շատ լաւ ծանօթ է այդ քահանային թէ աշխարհական «հայկունի» ժամանակը, թէ քահանայ՝ մեծամեծ քաջագործութիւններն անելիս։

Ծ. Խ.

» Դամղանի . . .	18 » — »
Սաքղան, խալվարը (18 փութ)	115 » — »
Բիղանա չամիչ	90 » — »
Ասկարի չամիչ, խալվարը .	75 » — »
Ընկոյզ	110 » — »
Բամբակ	350—370 » — »

Սև փողին թումանին 1 ղռան. 25 կ. սարֆ ունի։

Նոր փողի սարֆը հարիւր թումանին 10 ղռան։

Եթէ համեմատելու լինենք 1886 թւից մինչև 1896 թիւը պարսկական դրամի արած զանազանութիւնը արժէքի անկման մէջ, ահա թէ ինչ կը գտնենք։

1886 թւին պարսից ղռանը տրժէր 1 թումանը 3 ր. 50 կ. ռուսաց թղթադրամ, իսկ 1896 թւին արժէ միայն 1 ր. 80 կ. ուրեմն իւրաքանչիւր թումանում վնաս կայ 1 ր. 70 կ. որը 1886 թւի արժէքի համեմատ կը լինի 4 ղռան 65 կոպէկ։

Արդ, այդ վնասը . . .	4 ղռան 65 կ.
Սև փողի սարֆը . . .	1 » 25 կ.
Նոր փողի սարֆը . . .	— » 10 կ.

Ուրեմն վնասի գումարն է թումանին 6 ղ.

Այս հաշւով 10 տարւայ ընթացքում պարսկական մէկ թումանը (10 ղ.) կորցրել է 6 ղռան և այժմ ունի միայն 4 ղռանը։

Սրա պատճառը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ երկու սխալ մեռածների մրցումը—այն է ոսկու և արծաթի։ Երկրում որքան որ արծաթ դրամ կայ, նրա մէկ չորրորդը իսկ ոսկի դրամ չէ կարելի գտնել։ Այդ է պատճառը որ պարսից ղռանը օր ըստ օրէ իր արժէքը կորցնում է։ Երևի չը պէտք է կարծել որ արծաթի աժանութիւնը դեր է խաղում այստեղ, որովհետև եւրոպական բոլոր տէրութիւնների արծաթ փողերը նոյնպէս կարող էին իջնել դրա թեանը համեմատ. բայց այդպէս չէ, նրանք մի և նոյն արժէքը պահել են ինչ որ 10 տարի առաջ ունէին։ (Այդ մասին մենք առանձնապէս կը խօսենք. Ծ. Խմբ)։

Այս հիման վրայ, թշւառ է այն վաճառականը, որի պարտքը պահանջից աւելի է, Զրկանքն անպատճառ մի օր սնանկանալու է։

ԽԱԾՆ ԼՈՒՐԵՐ

—

Լռութիւնը՝ մէկն ասում է արհամարհութեան նշան է, իսկ շատերն՝ որ դա տգիտութեան նշան է։

—

Գերմանական «Zukunft» ամսագրում պրոֆ. Պրէյերը վերլուծելով Բէկօն Փէլիսոփայի Բրիտ. միւզէում ունեցած մի ձեռագիրը, յայտնագործել է որ այդ կտորը գտնվում է Շէկսպիրի «Loves labour lost» պիեսի Ե. Արարուածի I տեսարանում և այդպիսով փոքր ինչ էլ հաստատում է այն կարծիքը որ Շէկսպիրի գործերը Բէկոնի գրածներն էին։ Այդ հետաքրքիր գիւտին տեսնելով տառերից եռանկիւն է, որ սկսւում է ամենակարճ, և վերջանում է հրեշաւոր մեծութեամբ բառերով։

Ահա նա

ho
hono
honori
honorifi
honorifica
honorificabi
honorificabili
honorificabilitu
honorificabilitudi
honorificabilitudini
honorificabilitudinitu
honorificabilitudinitati
honorificabilitudinitatibu

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Լոնդոն. 17 յուն. (ն. տ.) Անգլօ-Ֆրանսիական համաձայնութիւնը կնքւեց Սիամում. գրանով Մե անգը դառնում է ֆրանսական Չինաստանի սահմանը։ —Լուր կայ որ Տրանսվաալի կառավարութեան մասին որ սարքւել էր Տրանսվաալը գրաւելու համար։ —Ֆրանսիական թերթերը յայտարարում են որ մինչև Եգիպտական խնդիրը չը որոշւի, Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնները, չը նայելով Սիամի մասին համաձայնութեան, նիւթապէս լաւանալ չեն կարող։

Լոնդոն. 18 յուն. Ֆրանսիան համաձայնել է նորոգել անգլիացոց Թունիզի հետ ունեցած վաճառականական դաշինքը։ Անգլիացիք համաձայնել են փոխադարձաբար չափաւորելու Նիգերի սահմանները։ —Պրետորիայի (Տրանսվաալ) պաշտօնական թերթը իւր մէջի այլոց յայտնում է որ Նախագահը հաստատապէս վճռել է երկրի կառավարութիւնը պաշտպանել։ —Ռէյտէրի յատուկ թղթակիցը յայտնում է Ա. բայից որ Աշանթիի կռիւը վերջացաւ։ Ժեներալ Սքօթը գրաւել է Կումասին առանց ընդդիմադրութեան։ Թագաւորը գիջել է անգլեացոց պահանջներին. գինուորները վերադառնում են։

Մադրիդ. 18 յուն. Կուբայից ստացած վերջին լուրերը հաստատում են որ ապստամբների անդադար ունեցած յաջողութիւնից գրգռւած, Սպանեացոց կոմմնակիցները պահանջում են պաշտօնանկ անել մարշալ Մարթինէզին։

Փարիզ. 18 յուն. Ֆլօկէ, Ֆրանսիական յայտնի քաղաքագէտը մեռաւ։

Բեռլին. 19 յուն. Մեծ ճաշկերոյթներ են տրվում այստեղ գերմանական կայսերութեան հաստատման 25-ամեայ տարեդարձի առթիւ։ Վիլհելմ կայսրը մի մեծ խնջոյքում խօսելով, շեշտեց կայսերութեան ունեցած աշխարհային չափ համբաւի վրայ և հրաւէր կարդաց ազգին շարունակել համերաշխ մնալ, որ կառավարութիւնը կարողանայ պաշտպանել գերմանացիներին երկրից դուրս ևս, եթէ պահանջ լինի։

Հռոմ. 19 յուն. Մենիլիքը խաղաղութեան դաշինք կապելու առաջարկներ է արել իտալացոց։

Լոնդոն. 20 յուն. Պաշտօնապէս յայտարարվում է որ անգլեական զօրքը խաղաղ կերպով գրաւեց Կումմասին, ութսուն կէսօրից յետոյ։

Մադրիդ. 20 յուն. Ժեներալ Մէյլեր յաջորդում է Կուբայում՝ մարշալ Մարթինէզին։

Վաշինգթոն 21 յուն. Արտաք. գործոց յանձնախումբի տւած վճիռը՝ Մօնրօյի վարդապետութիւնը աւելի տարածելու համար (տես Շաւիղ № 48, քաղաքական տեսութեան բաժնում) յայտարարւել է սենատին։ Վճռի ազդեցութիւնը կը լինի դնել Միացեալ-Նահանգների անմիջական հսկողութեան ներքոյ ամերիկական բոլոր մանր պետութիւնները։ Կլիվլէնդի յանձնախումբը Վենեցուէլայի սահմանը որոշելու խնդրի համար, հրաւէր է կարդացել անգլեացոց և վենեցուէլացոց՝ զեկուցումներ տալ իրենց ունեցած պահանջների համար։

Պետերբուրգ. 22 յուն. Ռուսօ-Չինական մի բանկ է կազմակերպւել և առաջադրվում է նրա ճիւղերը հաստատել եւրոպական և ասիական գլխաւոր քաղաքներում։

Լոնդոն. 22 յուն. Իշխան Հէնրի Բատենբերգի մահւան նոր լուրը ստացւեց այստեղ։

Վաշինգթոն. 22 Արտաքին գործոց կոմիտէտի տւած վճիռը Մօնրօի վարդապետութեան ընդունելու մասին լաւ ընդունելութիւն չէ գտել և հաւանական է որ չը՛ ընդունւի սենատի կողմից։ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ըստ երևոյթին փափագում է մի շուտափոյթ համաձայնութիւն կայացնել Անգլեայի հետ։

Հռոմ. 22 յուն. Աբիսինեայից հասած լուրերը հաղորդում են որ իտալացոց Մաքալէյի ունեցած դիրքը շատ կրիտիկական է և նրանց ջրի պաշարը պակասում է։

Լոնդոն. 23 յուն. Մադագասկարի թագուհին մի նոր դաշնագրութիւն է ստորագրել որով նա կղզին բարոյապէս ֆրանսացոց սեփհականութիւն է դարձնում։ —Նախագահ Կլիվլէնդը յայտարարել է արտ. գործոց կոմիտէտի վճիռը Մօնրօյի վարդապետութեան նկատմամբ որպէս մի չարութիւն (mischievous) և որպէս անժամանակ։

ՇԱՒԻՂԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Ռաշտ. Գ. Սարվարեան. Իզուր էք կարծում որ ձեր համակրութիւնը դէպի Շաւիղը մենք արհամարհում ենք. շնորհակալ ենք. միայն թէ ձեր գրածներից մինչև այժմ դեռ ոչ մէկը յարմար չենք գտել տպագրելու։ Ուսէք դեռ. շատ կարդացէք. ձեզ պակաս է ընդհանուր զարգացողութիւն. գոնէ փոքր ինչ կանոնաւոր գրելու համար։

Բագու. Մարդաս. ընկեր. Ղրաղարան. Ինչից է որ միայն դուք էք պակաս ստացել։ Մենք բոլորը կանոնաւորապէս ուղարկում ենք, եթէ նոր նոմերներ էք ուզում, վճարեցէք դրանց համար։ Ուղարկել էք 2 ր. ուրեմն կէս տարուայ բաժանորդ էք գրվում, լէ սխալմունք է եղել։

Արտաբիլ. Եչլիբէկեան. Սովորականի համար նւիրատւութեան ցանկը տպում ենք երբ յայտարարութիւն. ուրիշ կերպ չէ կարելի։

Արտօնատէր հրատարակիչ

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶ ՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդաբիլում, յօգուտ Հայաստանի ս վեալներին նւէր տւող անձերն են։

—

Եղբարք Թումանեանք 150 ղռան, Խաչատուր Ձահրազեան 50 ղ., Ա. Փ. 80 ղ., Անտոնեա Խաչիկեան 50 ղ., Յակոբ Եչլիբէգեան 40 ղ., Աւետիս Եչլիբէգեան 20 ղ., Օր. Սաթենիկ Եչլիբէգեան (5 տարեկան) 10 ղ., Գրիգոր Մհտ. Պետրոսեան 20 ղ., Հայրապետ Մ. Մնացականեան 10 ղ., Մինաս Նղաեան 40 ղ., Ալահվերդի Մ. Տէր-Սանուկեան 30 ղ. Միրզա Եաղուբ (թուրք) 20 ղ., Գրիգոր Զ...նեան 25 ղ., Մարգար Տէր-Հակոբեան 20 ղ., Յովհաննէս Մհտ. Պետրոսեան 10 ղ., Կարապետ Տէր-Յակոբեան 60 ղ., Եղբարք Տէր-Գաբրիէլեանց 30 ղ., Արշակ Ձահրաբեան 10 ղ., Գրիգոր Եղիազարեան 10 ղ., Սիմէօն Տէր Յովհաննէսեան 15 ղ. Ալէքսան Գէորգեան 5 ղ., Սահակ Դանիէլեան 3 ղ., Նազիր Միրզաեան 3 ղ., Բաղդասար ...զանեան 3 ղ., Ռաֆայել Սահակեան 15 ղ., Թադէոս Մհտ. Օհանջանեան 10 ղ., Մ. Գր. 40 ղ., Մովսէս Ս. Մովսէսեան 5 ղ., Սեդրակ Թումեան 6 ղ.: Գումարն է 800 ղռան։

Այս գումարն ուղարկւած է Դաւրէժ պարոն Թադէոս Աֆթանդիլեանին, որ պէտք է հասցնի Կ. Պոլիս, Պատրիարքին, նա էլ պէտք է հասցնի ուր որ հարկն է։

Շակոյի Եչլիբ կեան

Արդաբիլ 28 դեկտ. 95

Բուլղարիայի հայ երիտասարդներից մի խումբ պարտք է ուղարկել Նոր-Ջուղայու Որբանոցի խնամակալութեանը 204 ղռանի մի գումար. ուստի ընկերութիւնս պարտք է համարում Շաւիղի միջոցաւ յայտնել նւիրատուաց իր խորին շնորհակալութիւնը և աւելացնել որ այսուհետև պարզեւատու անձինք թող բարեհաճեն իրենց նւէրները ուղարկել ընկերութեանը սոյն հասցէով.

Նոր-Ջուղայու Որբանոցի խնամակալութեանը Կուսանաց Ս. Կատարինէ Վանքը։

Նախագահ Ս. Կոյս Հռիփսիմէ Միրզաեան

Փորի ճճուի դարման

Որովհետև փոստային տախսը աւելացրած է փոստային վարչութեան կողմից ուստի յայտարարում եմ որ այդ դեղը այսուհետև կարժենայ Ռուսաստանի համար 3 րուբլի։ Ռուսաստանից կարող են դիմել՝ M. Hordanan Eliazarian Téhéran.

—3

GRAND HOTEL

ԳՐԱՆԴ ՕՏԷԼ

Հիւրանոց

ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ԽՈՂՈՑՈՒՄ

ԹԷՀՐԱՆ

12—50